ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Խաչատրյանի 2024 թվականի ապրիլի 22-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 980000 ՀՀ դրամ տեղափոխել 04.2.1 ծրագիր 5131 հոդված՝ Սպիտակ ամուր /Белый амур/ ձկնատեսակ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 15-ի ավագանու որոշումը և 2024 թվականի ապրիլի 3-ի <<ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 1040000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4511 հոդված՝ Սիսիան համայնքի <<ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-ում ավագանու որոշմամբ հաստատված պահակի հաստիքի վարձատրությունը կատարելու համար:

Հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 7-ի <<ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 500000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4511 հոդված՝ Սիսիան համայնքում <<Վերջին զանգ>> միջոցառումների կազմակերպման համար երաժշտական խմբի հետ ծառայություններ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 25-ի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան Սուսաննա Սահակյանի զեկուցագիրը, ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՍԴ1/0659/02/22 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 80000 ՀՀ դրամ տեղափոխել 01.3.1 ծրագիր 4831 հոդված՝ ՍԴ1/0659/02/22 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռով սահմանված փաստաբանի խելամիտ վարձատրության վճարումը կատարելու համար:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերանորոգման աշխատանքների և կահավորման նպատակով նախատեսվում է 01.1.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 11670334 (տասնմեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որն տրամադրվում է «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն» ՍՊԸ-ի կողմից և պլանավորվում է նաև ֆոնդային բյուջեի / ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

07.05.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 11670334 (տասնմեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

07.05.2024թ.